

Կ Ա Ճ Ա Խ Ք

(Պ Օ Տ Ա Պ Է Կ Ո Յ Ի .)

Օգոստոսի 15 ին Համալսարանի դրանը մօտեցաւ
մէկ գեղեցիկ կառք, մի զորք մոխրագոյն հրաշալի՛ ձիե-
րով։ Կառապանի մօտի ծառան ճարպիկութեամբ թռաւ
տեղից և կառքի մէջ նստողին օգնեց գուրս գալու։

Իսկ կառքի միջինը մի շատ ջահէլ մարդ էր. ար-
տաքինին նայելով, հազիւ քսան տարեկան լինէր։
Նա բարձրահասակ էր, բարակ, լաւ կազմուածքով. ե-
րեսը թուխ և բոլորովին սափրած։ Երբ նա իջաւ կառ-
քից և դէսի գուռը գնաց, կարելի էր նկատել, որ նա
կազմում է. պարզ էր, որ բնականից նորա արտաքինն ամեննին
չէր կորցնում իւր նրբութիւնը. նա և՝ կազմում էր շատ
սիրուն կերպով, և՝ միևնոյն ժամանակ այդ սազում էր
նորան. կարծես թէ եթէ այդ պակասութիւնը չունե-
նար, ալնքան էլ գեղեցիկ չէր լինի։ Կան մարդիկ, ո-
րոնց սազում են որոշ պակասութիւններ։

Նա մտաւ Համալսարանի նախագաւիթը և ինքն
իրան իսկոյն նկատելի եղաւ նորա և այն երիտասարդ
մարդկանց արտաքինի մէջ եղած տարբերութիւնը, ո-
րոնք նորանից առաջ եկել էին ալդտեղ։ — Նոցա հին ու
տրորուած շորերը, անկարգ սանդրուած մազերը, ան-
շնորհք քալուածքը, կոպիտ ու անտաշ ձևերը, — (թէև

երբեմն նոքա ալդ անում էին դիտմամբ) ալդ ամենն աւելի աչքի ընկաւ, երբ նոցա մէջ երեաց մի երիտասարդ, որը հագնուած էր վերջին տարազով և որի վերարկուի ամեն մէկ ծալքի և նորա գդակի ամեն մէկ գծի մէջ կարծես փալում էր հարստութիւնը: Նայելով նորան, իսկոյն կարելի էր ասել, որ ալդ մարդը փողի նեղութիւն չունի և չգիտէ էլ թէ՝ ինչ է նշանակում փողի նեղութիւն...

'Ի հարկէ իսկոյն ուշադրութիւն դարձրին նորա վերայ: Ովքեր զոլգ զոլգ ման էին գալիս մէկ ծալքից միւսը՝ կանգնեցին, ովքեր էլ հեռու անկիւններումն էին՝ մօտեցան աւելի: Իսկ նա գնում էր առաջ հաստատ քալերով, բայց լետոյ տատանուելով կանգ առաւ, որովհետև կարծես չգիտէր, թէ ո՞ր կողմը պէտք է գնար:

Ցետոյ նա բոլոր ներկայ գտնուողների վերայ մի անտարբեր հալեացք գցելով և քիթը ցցած՝ կարծես կէսբերան հարցըեց.

— Ասացէք խնդրեմ, ալստեղ թղթեր որտեղ են ընդունում:

Ոչ ոք չպատասխանեց, բայց բոլորն էլ հետաքըր քրութեամբ առաջ եկան. մէկը, դուրս գալով բազմութեան միջից, ինչքան կարելի էր մօտեցաւ նորան և առանց քաշուելու սկսեց զննել նորա հագուստը:

— Ի՞նչ թղթեր, հարցըեց նա մի քիչ փորւած, կարծես դորանով ուզեց պատասխանել նորա արհամարհական ձեին:

— Վկալականների մասին եմ խօսում. որտեղ են ընդունում վկալականները:

— Դիւանատանը, պարզ բան է, դիւանատանը:

— Բայց ուր է դիւանատունը:

Եւ սկսեց նայել իրան շրջապատող մարդկանց վե-

րայ. թերեւս նա նկատեց, որ իւր երեալը մի առանձին հետաքրքրութիւն զարթեցրեց, թէև գուցէ նա ոչինչ էլ չնկատեց, որովհետև այդ մարդիկ նորան այնքան էլ չէին հետաքրքրում։

Բայց զարմանալի էր, որ նորա հասարակ հարցին ոչ ոք չէր ուզում մի որոշ պատասխան տալ։ Դիւանատունը, որտեղ համալսարան նոր մտնող երիտասարդներից խնդիրներ էին ընդունւում, միայն երկու քայլ հեռու էր և այդ գիտէին ամենքը ու բոլորն էլ շատ լաւ հասկանում էին, թէ ինչ էր նորան հարկաւոր։ Բայց հէնց այն միջոցին, երբ նա պատասխանի էր սպասում, ամենքն էլ սկսեցին յետ քաշուել և ցրուել, կարծես նոցանից ամեն մէկը վախենում էր, որ ինքը նորեկի համար այդ հասարակ ծառալութիւնն անէ. մասնաւանդ տարօրինակ էր տեսնել, որ այն երիտասարդը, որը բազմութեան միջից առաջ անցաւ ու սկսեց խօսել նորա հետ, յետոյ արհամարհանքով նայեց նորան և կարծես ուզելով ցոյց անել՝ հեռացաւ։

Մի վալրկեան նորեկն անելանելի դրութեան մէջ էր. ալդքան մարդկանցից նա շկարողացաւ մի հասարակ բան իմանալ—թէ որտեղ արդեօք կարող են իր վկալականներն ընդունել։

Բայց այդ իսկ լոպէին հեռու անկիւնից, ուր մի փոքր սեղան էր գրած և որի մօտ սովորաբար լինում էր համալսարանի դռնապան իւան Պրօխօրովիչը, մի շափազանց լարգուած մարդ ոչ միայն ուսանողներից, այլ և պղօֆեսսօրներից, որոնք մինչև անգամ նորան ձեռք էին տալիս, նա շտապով եկաւ առաջ։ Նա մի մեծ, լաղթանդամ մարդ էր, փառաւոր, արդէն սպիտակած մօրուքով և նոյնքան էլ փառաւոր լայն տարազով։ Շտապելով նորեկի մօտ, նա գլուխ տուեց և կանգնեց։

— Դիւանատունն էք կամենում, համեցէք, մի,
ալստեղ է:

— Համ, ալդտեղ է, մեքենաբար հարցը նորեկը
և թուի թէ իսկոյն մոռանալով բոլոր իրան շրջապա-
տողներին և նոցա անդուր վարմունքը, գնաց իւր ազա-
տարարի, Իւան Պրօխորովիչի ետևից:

Դիւանատան դրանը հասնելով՝ նա խառնեց իւր
գրպանը և մի քանի 20 կոպէկանոց հանելով, տուեց
իւան Պրօխորովիչին, որը շնորհակալութիւն արեց և
վերադարձաւ իւր մշտական սեղանի մօտ. իսկ երիտա-
սարդը մտաւ դիւանատուն:

Այնտեղ նա երկար չմնաց. իւր ցոլց տուած թըղ-
թերի հիման վերայ, համալսարան մտնելու բոլոր իրա-
ւունքներն ունէր և միայն մի քանի հասարակ ձևա-
կանութիւններ պէտք էր կատարել, որ քառորդ ժա-
մից աւելի չտեսեց: Նուտով նա դարձեալ նոյն ճա-
նապարհով վերադարձաւ. ուսանողներն էլ շրջապատե-
ցին նորան և բոլորովին արհամարհելով առանց ուշա-
դրութեան թողին: Երբ մօտեցաւ դրսի դրանը, նորա
ծառան, որ սպասում էր փողոցում և դրան ապակինե-
րից ուշադրութեամբ հետեւում այն բոլորին ինչ որ
ներսը կատարւում էր, իսկոյն դուռը բացեց, օգնեց
նորան սանդուխքի վերջին երեք աստիճաններից իջնե-
լու, զգուշութեամբ նստեցրեց կառքի մէջ և լետոյ
ինքն էլ նստաւ իւր տեղը: Երիտասարդը հեռացաւ իւր
գեղեցիկ կառքով ու սիրուն ձիերով:

Միւնոյն ժամանակ նախագաւթում ու նորան
կից միջանցքներում խմբեր կազմուեցին և սկսեցին ե-
ռանդուն կերպով քննել իսկոյն պատահած երևոլթը:

Ալդ երեսոյթը, ինչպիսին որ ներկալացնում էր շը-
քեղ հագնուած երիտասարդը, որ եկել էր իւր սեփա-
կան փառաւոր կառքով թանկագին ձիեր լծած, զու-

գուած ու զարդարուած ծառան հետը և որի նպատակն էր ուսանող լինելու միանալ արտաքուստ բաժանուած, բայց իրօք անտեսանելի բարոյական կապերով կապուած ընկերութեան հետ, ի հարկէ, անուշադիր չէր կարող մնալ, որպէս մի հազուագիւտ գէպք:

— Այդ բնէ թոշուն է, հարցնում էին ուսանողները միմեանց. ոչ ոք չի ճանաչում նորան և միմեանց հաղորդում էին իրանց տպաւորութիւնները:

Դժուար էր բացատրել, թէ ինչո՞ւ այդ ամեն կողմով կարգին երիտասարդն ալդպիսի անախորժ տպաւորութիւն թողեց բոլորի վերալ. նա շատ գուրեկան երես ունէր, գեղեցիկ մոլոք աչքեր, լայն ճակատ. իսկապէս նա իրան այնպէս էր պահում, որ ոչ մի խորշելի բան չկար նորա շարժուածքի ու ձեւերի մէջ. գուցէ միայն մի քիչ անտարբեր էր, որ շատ կարելի է ուղղակի սովորութիւն էր դառել նորա համար. բայց արնուամենալնիւ ընդհանուրի կարծիքը նորա մասին նըպաստաւոր չէր:

— Ի՞նչ անճոռնի մռութ ունէր, ասում էին նորա մասին. և որտեղից էլ գուրս պըճաւ. կարելի է մի որ և է իշխան է:

— Ոչ, իշխան չէ, պարոններ, ես ճանաչում եմ. — ասաց վերջապէս ընկերներից մէկը, կարծեմ ամենից ջահելը, որ նոր էր ուսանող մտել և որ չնայելով մի քանի օր առաջ միայն գիմնազիօնական համազգեստը հանել էր, մի այնպիսի հնացած բաճկոն ունէր հագած, որ կարծես թէ երեք տարուալ բանեցրած լինէր: — Հա, գիտեմ նորան. մենք միասին մի և նոյն գիմնազիօնումն էինք սովորուած:

— Ո՞վ է ուրեմն:

— Ազգը Գալաթի է:

— Գալաթի, այն լալտնի հարուստի որդին է:

—Այս, նորա հալըը 7 միլիոն ունի:

—Եօթը միլիոն, —բացականչեցին միանգամից մի քանիսը —ինչ անամօթութիւն. —Հեշտ է ասել՝ եօթ միլիոն...

—Մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ ես ու դու միասին 7 ռուբլու տէր էլ չենք...

—Ոչ, պարոններ, անխղճութիւն է... միթէ 7 միլիոն կարելի է աշխատել:

—Նա հացի գրասենեակ ունի. —շարունակեց բացատրել Գալաթիի ընկերը. —մի քանի նահանգներում գործակատարներ է պահում, որոնք հացը շատ էժան գովազ առնում են և յետոյ մեծ քանակութեամբ ամբողջ շոգենաւերով ուղարկում արտասահման ու չափազանց մեծ փող են վաստակում:

—Դորա համար էլ որդին ալդպիսի զզուելի՞ դէմք ունի, ասաց մէկը:

—Երեսի յոյն է, ենթադրութիւն արեց մէկ ու բերը:

—Այս, ծագումով, —ասաց բացատրող ուսանողը. բայց նորա մէջ ալժմ ոչ մի յունական բան չկալ. Գալաթիները վաղուց ուստացել են:

—Զեմ հասկանում թէ ինչո՞ւ է նա համալսարան մտնում. մի և նոյն է, դաստիարակութիւններին եկողը չէ. ինչ հարկաւոր է նորան դիտութիւն:

—Ի հարկէ, ոտով եկողը չէ, որովհետև կարող է իւր շքեղ կառքով գալ, սրախօսութիւն արեց միւսը:

—Երեսի մտածում է —աւելացրեց Գալաթիի ընկերը —որ համալսարանում նոյնպէս կարող է ճարպկութեամբ անցնել, ինչպէս որ գիմնազիոնում. այնտեղ նա ոչինչ չէր անում, բայց դորա փոխարէն ուսուցիչներից դասեր էր վերցնում, թանգ-թանգ վճարում նոցա և ալդպիսով նորան փոխադրում էին դասարանից դասա-

բան. բայց ալստեղ ալդ կարելի չէ և նորա բանը բուրդ կըլինի:

— 0', ի հարկէ, ապա թող փորձէ խցկուել...

Մէկ խօսքով, միանգամից և ինչպէս երևում էր առանց որ և է առիթի Դալաթիի կողմից, ամենքը, ո-րոնք նորա երևալու ժամանակ ներկալ էին, թշնամա-կան դիրք բռնեցին դէպի նա. ալդ զգացմունքն ան-ցաւ և նոցա վերալ, որոնք ալդտեղ ներկալ չէին և չէին էլ տեսել Դալաթիի երեսը: Դժուար էր ասել, թէ Բնչից առաջ եկաւ ալդ: Կարելի էր կարծել, որ աղ-քատ ու վատ հագնուած երիտասարդների մէջ նախանձ շարժուեց դէպի ալն երջանիկ մարդը, որ դեռ այնքան ջահնէլ էր, բայց արդէն ման էր գալիս իւր սեփական կառքով և միջոց ունէր կարգին ու լաւ հագնուելու: Բայց սիալ կըլինէր ալդպէս կարծել, որովհետև ալդ երիտասարդներն անկեղծ կերպով արհամարհում էին աշխարհիս նիւթական բարիքը: Բոլոր ժամանակ, որ նոքա ուսանող էին, մխիթարյունմ էին, և մինչև ան-դամ հրճւում էին աղքատութեամբ. մանաւանդ ալդ դուր էր գալիս նոցա, որովհետև ընդհանուր երևոյթ էր դա: Նոցա մէջ չկալին հարուստներ. բոլորն էլ կա-րօտութեան մէջ էին, բոլորն էլ գասեր էին տալիս, ամենքն էլ մի կերպ գլուխները պահում էին, աշխա-տում էին թոշակ ստանալ ու ոչ ոք չէր գանդատում իւր վիճակից: Եւ բացի ալդ, նախանձի զգացմունքն ուղղակի նոցա ազնիւ ու թարմ հոգիներին լատուկ չէր: Բայց այս գէպքում, հաւանօրէն նոցա դրութիւնների մէջ եղած զանազանութիւնն ինքն իրան աչքի ընկաւ: Մինչ համալսարանի պատերը սովոր էին տրորուած ու մաշուած զգեստներ և հասարակ չթէ շապիքներ տես-նել, ալդ վառաւօր հագնուած երիտասարդի երևալը կարծես վիրաւորեց նոցա:

Դա՛ նորեկ երիտասարդի և ընկերների մէջ եղած առաջին հանգուցն էր, որ ընկաւ առանց Գալաթիի մասնակցութեան և որ ահագին նշանակութիւն ունեցաւ նորա համալսարանական ապագայ բոլոր լարաբերութեանց ժամանակ:

Յետող Գալաթին ուսումնական տարրուալ ընթացքում ծանօթացաւ բոլոր ընկերների հետ, որոնք իրան հետ միասին միևնույն կուրսումն էին (իրաւաբանութեան) և էլի մի քանի ուրիշների հետ: Նա ամենակին չփոխեց իւր սովորութիւնները, կարծես չէր նկատում այն մեծ զանազանութիւնը, որ տեղի ունէր իւր սովորութիւնների և այն կարգերի մէջ, որոնք թագաւորում էին ալդտեղ, այդ շրջանում: Առաջուալ պէս նա գալիս էր համալսարան իւր կառքով և ծառալով: Երբեմն, երեսի փոփոխութեան համար, մօտենում էր համալսարանի դրանը մէկ ձի լծած փոքրիկ կառքով: Ձիերը փոխում էին լաճախ և մէկը միւսից հիանալի էին: Նորա հայրը ձիերի սիրահար էր և ահագին փողեր էր վճարում նոցա: Միշտ հագնուած վերջին տարազով, լաւ սափրուած, վարպետութեամբ սանդրուած, այդ անկարգ և մինչև անգամ կեղտոտ հագնուած ամբոխի մէջ՝ երիտասարդ Գալաթին մի ալնպիսի մարդու տպաւորութիւն էր թողնում, որ կարծես թէ սխալմամբ էր ընկել ալդտեղ: Բայց ինքը չէր նկատում այդ զանազանութիւնը. նա արդէն շատ էր ընտելացել իւր բաղդաւոր դրութեանը և չափազանց քիչ ուշադրութիւն էր դարձնում ուրիշների վերալ:

Խսկապէս խղճով որ ասելու լինինք, ոչ ոք նորա մասին վատ բան չէր կարող ասել. նա ոչ ոքի վատութիւն չէր անում, ամենքի հետ ուշադիր էր ու սիրով և մինչև անգամ քաղցր. միայն խօսելու ձևի մէջ քիչ անզգոլի էր, այն էլ սովորութիւնից էր և շուտով այդ

բանին ամենքն էլ սովորեցին և էլ չէին նկատում այդ պակասութիւնը։ Դէպքը բերած ժամանակ նա շատ առատ էր դէպի ընկերները։ ոչ ոք անձամբ նորանից օգնութիւն չէր խնդրում, այդ պատճառով նա չէր կարող ցոյց տալ իւր առատաձեռնութիւնը, բայց երբ մի որ և է ներկայացում, կամ երեկոյթ էր սարքւում յօդուտ բոլոր չքաւոր ուսանողների, կամ մի որոշ խմբի, նա ամենից շատ էր տոմսակ առնում և առանց խնայելու վճարում էր։ Նոյնպէս, երբ տեսնում էր որ ընկերները նպաստ են ժողովում ող և է աղքատ մարդու համար, նա իսկոյն կըմօտենար, թէև նորան չէին դիմում և կըգրուէր բաւական մեծ գումար։

Այնուամենայնիւ բոլորը դէպի նա սառն էին և անգամ խոյս էին տալիս նորանից. ու այդ բոլորն այն հանդիպումից ծագեց, որ տեղի ունեցաւ դեռ նորա առաջին անգամ համալսարան ոտ կոխելու բոպէին, նախագաւթի մէջ։ Նա առանձին եռանդով չէր յաճախում դասախոսութիւններին. նա իւր ծնողների միակ որդին էր. նորան երես էին տալիս և թողնում էին, որ անհոգ կեանք վարէ և այդ կեանքը նորան խանգարում էր լաւ ուսանող գառնալու։ Գիտութիւնը նորան չէր հետաքրքրում. նա համալսարան մտաւ միակ նպատակով, որ վերջն իրաւունք ունենալ բարձր ուսում ըստացած մարդու անուն վալելելու. չէր ուզում թերուս լինել։ Ճակատագիրը տուել էր նորան ամեն բան՝ հարստութիւն, առողջութիւն, բաւական խելք, և՝ դիրք բարձր շրջաններում. — ուրեմն ինչո՞ւ հրաժարուէր կեանքի դարձեալ մի ոչ աննշան զարդից։ Եւ նա ուշ-ուշ էր մտնում համալսարան, միայն երբ ժամանակ էր գտնում աչք բաց անելու այն թեթև քէֆերից, որ լինում էին իրան պէս հարուստ մարդկանց շրջանում։ Ինչ որ լսում էր լսարանում, շատ թոլլ կերպով էր մտնում

նորա գլուխը և երկար չէր մնում այնտեղ։ Դասախօսութեան բուն իմաստը նա չէր ըմբռնում։ լսում էր մի կերպ հարեանցի և լուսը դրել էր դէպքի, կամ գուցէ և մի ուրիշ բանի վերալ... Բայց ամենից ճիշդն այն էր, որ նա իւր ջահելութեան և անփորձութեան շնորհիւ, երբէք ոչ մի բանի մասին երկար ու բարակ չէր մտածում, գլուխը չէր կոտրում այս կամ այն բանի վերալ, այլ ուղղակի վայելում էր աշխարհիս բարիքները, որ նորան առատ պարգևել էր ճակատագիրը։

Բայց միայն նա չէր դէպի դասախօսութիւններն ալդպէս վերաբերւում։ ընկերներն էլ նոյնն էին անում, միայն գուցէ նոքա ուրիշ պատճառներ ունէին։ — Մի քանիսը լափշտակւում էին գրքերով և իրանց ժամանակի մեծ մասը գործ էին դնում նոցա վերալ ու ալդ պատճառով դասախօսութիւններ քիչ էին լսում։ Միւսները մաքառելով աղքատութեան դէմ, բոլոր ժամանակը կորցնում էին ապրուստ ճարելու վերալ, վազում էին դաս տալու, սլարապում էին արտագրութեամբ և համալսարան մտնում էին միայն նորա համար, որ իւմանան թէ որ և է հետաքրքիր բան չէ պատահել արդեօք։ Նատերն էլ գիմնազիոնում ուժ տարի շարունակ չարչարուելուց ու լոգնելուց լետոյ ազատութիւն ձեռք բերելով, ընկնում էին ուրախ շրջանի մէջ ու տարում էին կեանքի նորութեամբ և ալդպէս, ուսանելը թողնում էին ուրիշ ժամանակի։ Իսկ եզրակացութիւնը նոյնն էր որ նոքա բոլորն էլ վատ գիտէին համալսարանական առաջականները, բայց թէ մեծ մասամբ քննութիւնները բռնում էին լաջող և ալդ տեսակէտից Գալաթին ամենից թոյլը չէր. կալին և նորանից աւելի թոյլ ուսանողներ։

Քննութիւն բռնելը — առանձին արուեստ է։ Նախապաշարմունք է, թէ իբր մարդ պէտք է առարկան

լաւ ուսումնասիրած լինի, որ լաւ թուանշան ստանալ. հարկաւոր է գլխաւորապէս իմանալ պրօֆեսորի հետ վարուելու ձեւը. հարկաւոր է գիտենալ, թէ ինչ պէտք է ասել այս կամ այն դէպքում: Խսկ Գալաթին շատ աւելի լաւ գիտէր խօսել, քան միւսները, որովհետև իւր կրթութեան շնորհիւ գիտէր իրան ազատ պահել և չամաչել հասարակութեան առաջ:

Եւ երբ քննութիւններն սկսուեցին, Գալաթին թէև շատ թոյլ էր պատրաստուած, բայց նոյնպէս լաջող բռնեց, ինչպէս և միւսները: Միայն մէկ պրօֆեսորի հետ նորս գործը լաւ չգնաց. և տարօրինակ էր, որ այդ պատահեց «քաղաքալին իրաւունք» դասախոսող պրօֆեսորի հետ, որի ազգն էր Մարչէնկօ. ամենքը զարմանում էին, որ Գալաթին նորա առարկալից վատ թուանշան ստացաւ:

Դժուար թէ Մարչէնկօից աւելի բարեսիրտ և մեղմ մարդ գտնուի: Այնպէս էր թւում, թէ նա անկեղծ տանջւում էր, երբ ուսանողը պատասխանելիս դժուարանում էր և բոլոր ոյժով սկսում էր նորան օգնել, կարծես ուզում էր խաբել ինքն իրան և համոզել ուրիշներին, որ առարկան գիտէ ոչ թէ ինքը, ալլ պատասխանող ուսանողը:

— Սլդպէս է, այդպէս, ասում էր նա այն դէպքերում, երբ ուսանողը կրկնում էր նորա խօսքերը. առարկան գիտէք, միայն թէ շփոթուեցիք, այնպէս չէ. դէ, իսկ այդ է, իսկ ալդ...

Եւ Մարչէնկօն իւր պրօֆեսորական երկարատև գործունէութեան ժամանակ ոչ մէկ ուսանողի դեռ 2 թուանշան դրած. չկար:

Նորա առարկալից քննութիւնը սկսուեց: Գալաթին նոյնպէս միւսների հետ նստած լսում էր: Ուսանողները, որոնք «քաղաքալին իրաւունքի» մասին միայն լսել

էին, մէկը միւսի լետևից դուրս էին գայիս և պրօֆես-
սօրի հարցերին պատասխանում էին անհասկանալի բա-
ներ. բայց վերին աստիճանի համբերող Մարչէնկօն բո-
լորին էլ օգնում էր և Ցներ էր նշանակում։ Նատ
հազիւ էր պատահում, որ մէկ ուսանող գիտենար նորա
առարկան և ալդպիսի ուսանողին Մարչէնկօն երկու
ձեռքով ամուր բռնում էր, հազարաւոր գովեստներ էր
շռալում և շտապով նորա պատասխանը դադարեցնելով
շուտով ճ-էր նշանակում, կարծես վախենալով, որ Ճ-
լինք թէ այդ միակ, հազուագիւտ օրինակն էլ սկսէ ա-
ւելորդ բաներ դուրս տալ։

Եւ Գալաթին բոլորովին հանգիստ էր ու միան-
գամայն համոզուած, թէ ինչպէս որ միւս քննութիւն-
ները վերջացրել էր լաջող, ալնպէս էլ Մարչէնկօլի ա-
ռարկալից բաւարար թուանշան կստանալ. ուղիղ է, որ
ինքը ալնքան էլ չգիտէր այդ առարկան, բայց տեսնում
էր, որ իրանից վատ գիտցողներին էլ Մարչէնկօն Յ ու
Գ-եր էր գնում և նա ինքն իրան արդէն երկրորդ
կուրսի ուսանող էր համարում։

Եկաւ և նորա հերթը. մօտեցաւ սեղանին և տոմսակ
վերցրեց։ Մինչ մէկ ուրիշ ուսանող գեռ պատասխանում
էր և Գալաթին դեռ ժամանակ ունէր պատրաստուելու
ու պատասխանը որոճալու, Մարչէնկօն նալեց նորա
վերայ և մի տեսակ կծու կերպով ժպտաց։ Այդ տեսակ
ժպտաց դեռ ոչ ոք չէր տեսել նորա շըթունքների վե-
րալ, բայց Գալաթին չնկատեց, խորասուզուած իւր տոմ-
սակի մէջ. նա սպասում էր, թէ երբ պէտք է ժամա-
նակը հաօնի պատասխանելու։

Եւ ահա, պատասխանող ուսանողը Յ ստանալով
գնաց։ Մարչէնկօն գիմեց Գալաթիին։

— Զեր տոմսակը։

Գալաթին տուեց տոմսակը։

— Օհն, լաւ, ասացէք տեսնենք:
Գալաթին սկսեց անվստահ կերպով:

Բայց լետոյ իրան տիրապետելով խօսեց համարձակ
և թէս մեծ մասամբ աւելորդ նախադասութիւններ էր
ասում, բայց ալսպէս թէ այնպէս լարմարում էին գոր-
ծին. ալսինքն՝ նա սկսեց գործ դնել իւր սովորական
արուեստը, պատասխանել հարթ ու կոկիկ ձևով, ա-
ռանց կակագելու, չնալերով որ առարկալից շատ քիչ տե-
ղեկութիւն ունէր:

— Օհն, լաւ, լաւ..., ասաց Մարչէնկօն. — միայն թէ
ալդպէս չէ, ձեր ասածը բոլորովին ալլ է...

— Ի՞նչպէս թէ ալլ է, ցածը ձայնով հարցրեց Գա-
լաթին, քիչ ալլալուած պրօֆէսսօրի ալդ տարօրինակ
վարմունքից:

— Ալլ է ասում եմ, այն չէ... բայց լաւ, շարու-
նակեցէք...

Գալաթին շարունակեց, բայց արդէն ոչ այնպիսի
վստահութեամբ ինչպէս առաջ. նա շփոթուած՝ խօս-
քերն իրար էր խառնում և ասածից ոչինչ չէր հաս-
կացում:

— Ալդ բոլորն անկապ խօսքեր են միայն. առար-
կալի մասին խօսեցէք... օհն,... հը... ալդպէս, ալդ-
պէս... միայն թէ ձեր ասածը անպէտք բաներ են...
այո՛... անպէտք... ես ստիպուած եմ ձեզ 1 նշանակել...

Լսարանում գտնուողներն ամենքն էլ վզները եր-
կացրին զարմացած և չէին հասկանում, թէ ինչ էր
նշանակում ալդ:

— Պարո՞ն պրօֆէսսօր..., ուզեց խօսել Գալաթին.
իսկ Մարչէնկօն կտրեց նորա խօսքը —

— Ես ձեզ միաւոր կըդնեմ, աւելի նշանակել չեմ
կարող:

— Բայց թոյլ տուէք, պ. պրօֆէսսօր, արդէն մի քիչ աւելի ձայնը բարձրացնելով ասաց Գալաթին:

— Ոչ, աւելորդ է. ես ձեզ կընշանակեմ ալն, ինչի որ արժանի էք. միաւորից աւելի չեմ կարող նշանակել:

Գալաթին բռնկեց. նորա վրայ նայում էր ամբողջ լսարանը: Եւ թէև նա ինքը գիտէր, որ իսկապէս վատ է պատասխանում, առարկալի մասին շատ թոյլ տեղեկութիւն ունի, բայց միւնոյն ժամանակ տեսնում էր, որ ուրիշներն իրանից աւելի վատ էին պատասխանում և դարձեալ ստանում էին Ց-ներ ու Գ-եր:

—Պ. պրօֆէսսօր, դողդոջուն և սպառնացող ձարնով խօսեց Գալաթին.—Ես չեմ ասում, որ առարկան լաւ գիտեմ, բայց ուրիշներից վատ չգիտեմ, որոնց դուք նշանակել էք...

— Այո... ես նշանակել եմ. ալդ իմ գործն է: Իսկ առարկան պէտք է գիտենալ առանց ուրիշների համեմատութեան. ուղղակի հարկաւոր է լաւ գիտենալ և ալն ժամանակ միալն կարելի է լաւ թուանշան պահանջել: Ել ուրիշ ոչինչ չունիմ ձեզ ասելու...

Գալաթին սաստիկ վրդովուած մի ըոպէաչափ իւր տեղում ճոճում էր, կարծես տատանւում էր ու չգիտէր, թէ ինչ վճռէր և յետոլ միանգամից շուռ եկաւ ու գնաց ոչ թէ իր առաջուալ տեղը, որտեղ նստած էր, այլ ուղղակի լսարանից դուրս: Դուռն աղմուկով ծածկուեց նորա յետևից, որ ապացոյց էր նորա զայրացած լինելուն:

Ուսանողները ճնշուած էին զգում իրանց. նոքա ամենեին չէին հասկանում, թէ ինչպէս կարող էր ալդ տեսակ փոփոխութիւն առաջ գալ բարեսիրտ Մարչէնկօլի մէջ: Նատերը մտածում էին թէ մի գուցէ ծերունի պրօֆէսսօրը Գալաթիի հետ անձնական հաշիւներ ունի: Մի քանիսն էլ աւելի հեռուն էին գնում և հա-

մարձակւում էին ենթադրել՝ որ Մարչէնկօի այդ վար-
մունքի մէջ շահասիրական մի բան կար, որ իբր նա
Գալաթիից, իբրև շատ հարուստ մարդուց, լոյս է ու-
նեցել որ և է օգուտ ստանալ, բայց երբ ձեռքը չէ ըն-
կել, ուզեցել է վատ թուանշան դնելով վրէժն առնել
նորանից: Այդ տեսակ ենթադրութիւնները սարսափելի՛
էին և միայն ցոլց էին տալիս, թէ լաւ համբաւը որ-
շափ խախուտ բան է: Մարչէնկօն իւր պլրօֆեսսօրական
երկարամեալ գործունէութեան միջոցին միշտ ունեցել
է անկաշառ, ազնիւ մարդու անուն:

Բայց ուսանողներին կարելի էր ներել այդ ենթա-
դրութիւնների համար, որովհետև նորա վարմունքն
արդէն շատ խիստ էր և ոչ ոք չէր կարող Մարչէնկօ-
լից այդ տեսակ բան սպասել:

Ծերունի պլրօֆեսսօրը շարունակում էր իւր քըն-
նութիւնը, կարծես ոչինչ չէր պատահել: Ուսանողները
մօտենում էին սեղանին, տոմսակ էին վերցնում, պա-
տասխանում էին շատ վատ և նա իւր սովորութեան
համեմատ նոյց թերագրում, օգնում էր, ստիպում էր
կըկնել իւր խօսքերը ու բոլորին էլ 3—4 դնում: Գա-
լաթիի հեռանալուն պէս, պլրօֆեսսօրի մշտական բա-
րութիւնն ու ներողամտութիւնն առաջ եկան:

Գալաթին տուն գնաց վիրաւորուած... բայց շու-
տով սառեց և կէս ժամից լետոյ վերադարձաւ համալ-
սարան: «Քաղաքալին իրաւունքից» լաւ թուանշան ու-
նենալը նորան այնուամենալիւ անհրաժեշտ էր: Աշ-
նանը քննութիւն տալու միտքը նորան դուր չէր գա-
լիս. նա մի գրաւիչ ծրագիր ունէր՝ ամառն անցկացնել
արտասահման, ուրախ ընկերութեան շրջանում. այն-
պէս որ վերաքննութեան մասին մտածելը կընշանակէր
ամբողջ ամառը կորցնել:

Գալաթին եկաւ, բայց լսարան չմտաւ. նա ան-

լարմար էր համարում այնտեղ խօսել պրօֆեսորի հետ .
և նախագաւթում սպասեց նորան:

Նուտով! Մարչէնկօն վերջացրեց քննութիւնը, դուրս
եկաւ նախագաւիթ, որտեղ Գալաթին սպասում էր նո-
րան. Գալաթին մօտեցաւ Մարչէնկօյին:

—Պ, պրօֆեսոր, ես դարձեալ կուզէի ձեզանից
բացատրութիւն խնդրել:

—Բացատրութէն, հարցրեց պրօֆեսորը. —Միթէ
դուք համոզուած էք, որ իմ առարկալից լիրաւի բա-
ւարար պատասխան տուիք:

—Պ, պրօֆեսոր, ի հարկէ, ես շեմ ուրանում, որ
վատ դիտէի առարկան, բայց համաձայնեցէք, որ ես
ուրիշներից վատ չէի պատասխանում...

—Ծշմարիտ է, բայց դա գործին չի վերաբերում. եթէ
ես լաւ թուանշան եմ գնում վատ պատասխանի համար,
ալդ, ես իմ համոզմունքով խոճիս վերալ եմ առնում...
բայց ես իրաւունք ունիմ վատ թուանշան գնելու վատ
պատասխանի համար... Թէև, հանգիստ կերպով աւե-
լացրեց նա, եթէ կամենաք, չնայելով որ արդպիսի կա-
նոն չկայ, ես իսկոյն պատրաստ եմ ձեզ երկրորդ ան-
գամ քննել. բայց նախազգուշացնում եմ, որ դուք ա-
ռարկան պէտք է գիտենաք, եթէ ուզում էք լաւ թուա-
նշան ստանալ:

Գալաթին նորից բռնկեց, բայց իրան զսպեց, որ
որևէ խիստ բան չասէ, այլ միայն նալից նորա վերալ
վառուող աչքերով. նա իսկոյն վերաքննութիւն տալուց
հրաժարուեց և յետաձգեց աշնանը:

Սլդ պատճառով նա ստիպուած էր իւր ծրագիրը
փոխել. նա չգնաց արտասահման, այլ մնաց իրանց գիւ-
ղում, քաղաքից ոչ հեռու և սկսեց եռանդով պատրաս-
տուել. Նորա ինքնասիրութիւնը խիստ վիրաւորուած էր
և ալդ պատճառով նա լիրաւի լուրջ ուշադրութիւն
լուսաց 8.

դարձրեց ալդ առարկալի վերալ. նա վճռեց Օգոստոսին Մարչէնկօլի աչքին երևալ իսկական գիտութիւն ձեռք բերած:

Եւ ահա եկաւ օգոստոսը. վերաքննութիւն ունեցող ուսանողները հաւաքուեցին:

Երբէք, տարուայ ալդ ժամանակ համալսարանում չէին տեսել ծերունի պրօֆեսոր Մարչենկօլին. նա քաղաքի մօտերը մի փոքրիկ ամարանոց ունէր, ուր գնում էր անմիջապէս քննութիւններից լետոյ և ամողջ ամառը մնում էր այնտեղ: Որովհետև նորա առարկալից ոչ ոք երեքից պակաս թուանշան չէր ստանում, ալդ պատճառով վերաքննութիւն չէր լինում, և նա իւր ամարանոցում հանգիստ նստում էր, մինչև դասախոսութեան սկիզբները, ալսինքն մինչև սեպտեմբեր ամիսը:

Այս անգամ Մարչէնկօն օգոստոսին եկաւ. երեսի նա շատ լաւ էր լիշում Գալաթիի հետ պատահած գէպքը. Գալաթին միակ ուսանողն էր, որի համար Մարչէնկօն թողել էր իւր սիրած ամարանոցը և շտապել էր գալ համալսարան:

Եւ լսարանը տարօրինակ տեսք ունէր, ուր մտաւ ծերունի պրօֆեսորը. այնտեղ չկար ոչ մի մարդ և միայն լաւ ու նուրբ հագնուած Գալաթին էր, որ ներս մտաւ նորա լետուից:

Մարչէնկօն սեղանի մօտ իւր տեղը բռնեց և աչքերը վեր բարձրացրեց:

— Դէ, — ասաց նա — համեցէք, տեսնենք:

Գալաթին ինչպէս միշտ, աթոռն առաւ և սեղանին մօտեցրեց:

— Նստեցէք, ասաց Մարչէնկօն — պատրատուել էք:

— Այո, ես պարապում էի ամբողջ ամառը. մուալլկերպով պատասխանեց Գալաթին:

— Լաւ, ուրեմն կկամենաք ինձ ալս ասել...

Եւ Մարչէնկօն մի հարց տուեց:

Գալաթին մտածեց և սկսեց պատասխանել: Նա շատ լաւ էր պատասխանում. պրօֆէսորը հաւանելով գլուխը թափ էր տալիս:

— Հը՛, լաւ, այդ գիտէք:

Ցետով նա տուեց նորան երկրորդ և երրորդ հարցը: Այդ բոլորին Գալաթին շատ լաւ էր պատասխանում. երեսում էր, որ լիրաւի ամբողջ ամառը պարապել էր բարեխղճութեամբ:

— Հիմա ես իրաւունք չունիմ ասելու, որ դուք չը-գիտէք, ասաց Մարչէնկօն և եթէ որ այժմ ես ձեզ բաւարար թուանշան գնելու չլինիմ, դուք իրաւունք ունիք բողոքելու. բայց այն ժամանակ իրաւունք չունէիք... ես ձեզ 4 կընշանակեմ:

— Պ. պրօֆէսոր, դուք 4 էք դնում այնպիսի մարդկանց, որոնք ոչինչ չգիտեն. մեղմ ձախով վրայ բերեց Գալաթին, բայց միևնույն ժամանակ նորա աչքերը խիստ էին նալում. իսկ ես ամբողջ ամառն ուսումնասիրել եմ առարկան:

— Հապա ինչ նշանակեմ. չէ՞ որ 5 ը ամենաբարձր թուանշանն է և դուք չէք կարող ասել, թէ առարկան գիտէք չափազանց լաւ:

— Ի հարկէ, չեմ կարող ասել:

— Ուրեմն նշանակում է ձեզ աւելի հարկաւոր չէ... ես ձեզ 4 կըդնեմ:

Գալաթին արդէն մէկ անգամ փորձել էր Մարչէնկօլի հաստատակամութիւնը, այնպէս որ էլ բան չխօսեց: Նա շատ էր ափսոսում, որ չնայելով այն եռանդին, որ ըգգում էր իւր մէջ առարկան ուսումնասիրելիս, չնայելով այն զոհաբերութեանը, որ այդ առարկալից պատրաստուելու համար չգնաց արտասահման, դարձեալ չստացաւ ամենաբարձր թուանշանը, որ կարող էր իրան

պէտք գալ ուսում աւարտելիս, կանդիդատի աստիճան ստանալու համար: Բայց ոչինչ չասաց, վեր կացաւ տեղից, սառը նալեց պրօֆէսորին և գուրս եկաւ:

Երբ աշնանը բոլոր ընկերները վերադարձան, շատ հետաքրքրութեամբ հարց ու փորձ էին անում Գալա-թիին, թէ ինչպէս վերջացրեց վերաքննութիւնը:

—Ես չէի ուզում վիճել նորա հետ. քիչ ինքնահաւան կերպով ասում էր նա. —բայց կարող էի պահանջել, որ զոկ քննիչ մասնաժողով նշանակուի, որով հետեւ իսկապէս առարկան ես ուսումնասիրել էի... Եթէ որ նա գարնան քննութիւնների ժամանակ իմ լսած պատասխաններին 4—5 էր նշանակում, այժմ պէտք է 10-ը նշանակէր:

—Ի՞նչով էք բացատրում այդ անարդարութիւնը, հարցնում էին նորան:

—Բացատրել չեմ կարող. կարծում էի թէ համալսարանում առ հասարակ չի կարող երեսպաշտութիւն և անարդարութիւն լինել...

—Իսկ առաջ դուք Մարչէնկօլի հետ ոչ մի անախորժ դէպք չեք ունեցել:

—Ես նորան բոլորովին չէի էլ ճանաչում:

—Կարելի է ձեր հայրը...

—Նա երբէք չէ լսած դորա անունը:

—Ցիրաւի, զարմանալի է, որովհետեւ Մարչէնկօլի անունը գիտութեան մէջ բաւական հռչակուած է և նորան իբրև հին պրօֆէսորի քաղաքում ամենքը ճանաչում են:

—Ալդ չի պարտաւորեցնում իմ հօրը նորան անպատճառ ճանաչել. նոցա ճանօթների շրջանը բոլորովին տարբեր է:

—Բայց ասացէք, գուցէ Մարչէնկօն ձեզանից որ և է բան էր սպասում... Լսել ենք, որ դուք գիմնա-

զիօնում ահագին փողեր էք վճարել ուսուցիչներին դասերի համար...

— Զգիտեմ, ճշմարիտ, թէ ինչ ձևով պէտք է պրօֆէսորին ալդ տեսակ վարձ առաջարկէի... Բաւական կոպիտ ասաց նա:

Գալաթին թէև պարզ չէր ասում, բայց այն կարծիքին էր, որ Մարչէնկօն ուզում է իրանից մեծ կաշառք պոկել: Եւ որովհետեւ ոչ ոք չէր կարող որ և է յարմար բացատրութիւն գտնել պրօֆէսորի ալդ տեսակ անարդար վարմունքի համար, ուստի շատերը Գալաթիի կարծիքն էին հաստատում: Ի՞նչ նշանակութիւն ունի, որ մինչև հիմայ Մարչէնկօն բարի և զիջող էր և ուսանողներին լաւ թուանշան էր դնում վատ պատասխանների համար. բայց համալսարանում բացի շատ քիչ բացառութիւնից միշտ էլ աղքատ մարդիկ են եղել. իսկ այժմ լանկարծ միլիոնատէր է երեացել...

Ժամանակն անցնում էր: Գալաթին փոխադրուեց երկրորդ կուրսը: Մարչէնկօն շարունակում էր իւր դասախոսութիւնները: Տարուալ ընթացքում ուսանողները նորա հետ ոչ մի առանձին լարաբերութիւն չէին ունենում. նա գալիս, նստում էր ամբիոնը և հեռանում:

Գալաթին իւր առաջուալ կեանքն էր վարում: Գիտութեանը քիչ էր նույիրուած. նա աւելի ուշուշ էր երեսում դասախոսութիւնների ժամանակ և համալսարան գալիս էր առաջուալ պէս փառաւոր կառքով: Նա դեռ մի նոր սովորութիւն էլ էր սեպհականել. — նորանից անուշահոտ ջրերի հոտ էր բուրում, իսկ մազերի սանդրուածքն աւելի խնամքով էր լինում, քան առաջ. երեսում էր, որ ինքը չէր սանդրում իւր մազերը, առ գիմում էր սափրէչի օգնութեանը: Ուսանողները, որ միշտ տրամադրիր էին նորա մէջ մի ծիծաղելի բան գըտնելու, ասում էին թէ՝ Գալաթին սիրահարուած է և

ալդ պատճառով աւելի է զբաղւում իւր արտաքինով։
Նա չէր նկատում, որ ներս մտնելիս ընկերները
ծիծաղում էին իւր վերալ. նա չափազանց արդէն ընկըղ-
մուած էր իւր սեփական աշխարհի մէջ և ամենեւն
նշանակութիւն չէր տալիս հին ու մաշուած զգեստներ
հագած երիտասարդ ուսանողներին. նա նոցա վերալ նա-
լում էր իբրև կեանքի պատահական սւղեկիցների
վերալ։

Բայց Մարչէնկօլի դասախոսութիւններին համեմա-
տաբար աւելի էր գալիս և թէև ալդ դասախոսութիւնն
էլ բաւական բաց էր թողել, բայց որոշ չափով կարող
էր դատել առարկալի մասին. բացի ալդ, նա քիչ թէ
շատ կարգում էր ալդ առարկալից և առ հասարակ պարզ
էր, որ նա հաստատ վճռել էր եկող քննութեան ժա-
մանակ խոյս տալ անցեալ տարում Մարչէնկօլի հետ ու-
նեցած անբաւականութիւնից։ Այդ տարին էլ անցաւ ու
վրալ հասան քննութիւնները։ Դարձեալ, ինչպէս և ա-
ռաջին տարին, Գալաթին բոլոր միւս առարկաներից յա-
ջող քննութիւն տուեց և երբ գնաց սեղանի մօտ, որ-
տեղ նստած էր Մարչէնկօն, Գալաթիի դէմքը համե-
մատաբար աւելի էր վստահ։ Եւ նա սկսեց պատասխա-
նել։ Կարծես նա խօսում էր իսկական գործի մասին,
թէև ոչ այնքան համարձակ, բայց եթէ որ անկողմնա-
պահ դատաւորը համեմատէր ուրիշի պատասխանը սորա
հետ, կգտնէր, որ Գալաթիի պատասխանները հանճա-
րեղ էին։ Բայց Մարչէնկօն նալում էր Գալաթիի վերալ
այն ծուռը, կծու ժպիտով, ինչպէս անցեալ տարուալ
քննութեան ժամանակ։ Էլ երբէք նորա շրթունքների
վերալ չէին տեսնում այն ծաղրը, որ երեւում էր միայն,
երբ Գալաթին կանգնում էր նորա առաջ։

Բայց ահա նա նշանացի կանգնեցրեց Գալաթիին։
յետոյ մի հարց տուեց, որին Գալաթին միանգամից չը-

կարողացաւ պատասխանել. կըպատասխանէր, եթէ որ ժամանակ տրուէր նորան մտածելու, բայց Մարչէնկօն իսկոյն աւելացրեց՝

— Զգիտէք. հը. ուրեմն պատասխանեցէք այս հարցին:

Եւ առաջարկեց մի ուրիշ հարց, աւելի բարդ և իսկոյն վրալ բերեց.

— Ե՞ս, ալդ էլ չգիտէք, ինչ արած, չեմ կարող ձեզ Յ դնել...

—Պրօֆէսսօր, պարզ է, որ դուք չեք կամենում — շեշտելով պատասխանեց Գալաթին:

Մարչէնկօլի դէմքը սաստիկ խիստ ու չոր արտալայտութիւն ստացաւ. նա ուղղակի Գալաթիի աչքերին նալեց և ասաց՝

—Այս, իսկապէս չեմ կամենում և նշանակում եմ ձեզ... Զ....

Գալաթին բռնկեց և ուզեց խօսել, բայց ալդ ժամանակ Մարչէնկօն գիմեց մէկ ուրիշ ուսանողի, որ տոմսակը ձեռքին ալդտեղ կանգնած էր.

— Դուք պատասխանեցէք...

Գալաթին այս տարի աւելի զայրացած ու լուզուած դուրս գնաց լսարանից, որովհետև խոստովանւում էր, որ այս անգամ աւելի էր պատրաստուած ալդ առարկալից քան առաջին տարին:

Նա երկար ժամանակ ման էր գալիս համալսանի միջանցքում սաստիկ ալլալուած. ալժմ իրան համար արդէն պարզ էր, որ Մարչէնկօն վճռել էր ամեն տեսակ դժուարութիւն առաջ բերել քննութեան ժամանակ և այդպէս մտածելով, նա ալլ ևս ամենեին չէր կասկածում թէ ինչն էր ալդ դժուարութեան պատճառը — Մարչէնկօն գիտէ, որ ես շատ հարուստ եմ և չի ուզում լարմար դէպքը ձեռքից բաց թողնել, կա-

մենում է կաշառք առնել։ Ուղիղ է, որ նա երբէք մըտքից չէր անցնում, թէ համալսարանում կարող են գըտնուել այդպիսի մարդիկ, բայց փաստն ակներև էր։ Ոչ ինքը և ոչ իւր բարեկամները երբէք, ոչ մի անքաւականութիւն չէին ունեցել Մարչէնկօլի հետ։ Այդ մարդը, որ քսան տարիների ընթացքում բարի ու ներողամիտ պրօֆէսորի անուն էր վայելում, լանկարծ, միայն իրան համար, այո՛, յատուկ իրան համար, որ միլիօնների տէր է, նորա մէջ երեւաց խստութիւն, բժախընդութիւն և 2 գնելու սովորութիւն։

Գալաթին տուն գնաց և խօսեց ալդ մասին հօր հետ։ Հայրն, ինչպէս փորձուած մարդ, որ սովոր էր ամենքան աշխարհիս երեսին փողի տեսակէտից բացատրելու, ուղղակի ծիծաղեց նորա վերալ։ —

—Դէ, ի հարկէ, ի հարկէ, պարզ հասկանալի է. դու նորա տունը գնա՞ և հետը խօսի՞ր... միայն անպատճառ հետդ բաւական խոշոր գումար վերցր՞ւ... չէ որ նա առաջնակարդ պրօֆէսոր է. նորա մօտ կարելի չէ գնալ որ և է աննշան գումարով... և կըտեսնես, որ վաղը քո 2-ը կըդառնալ ճ...»

Ուրիշ հանգամանքներում Գալաթին չէր վճռի անձամբ ալդ անելու, այլ կըխնդրէր, որ հայրն իւր տեղը կատարէ ալդ անախորժ գործը։ Բայց նա կատարած էր իւր պրօֆէսորի վերալ և անպատճառ ուզում էր տեսնել, թէ ինչպէս այն մարդը, որ բարի և արդարադատ պրօֆէսորի համբաւ էր վայելում, լաւ կաշառքի շնորհիւ կըսկսէ փոխուել և հալ ու մաշ լինել իւր առաջ։ Այո՛, նա ուզում էր ինքը լինել իւր լաղթութեան վկան։

Նա սպասեց մինչեւ ժամը չորսը, որովհետև գիտէր, որ ալդ ժամանակ են վերջանում քննութիւնները։ Չըրսին մօտ, նորա կառքը կանգնեց մի միայարկ փոքր տան առաջ, որտեղ ապրում էր Մարչէնկօն։ Նորա ծա-

ուան մի առանձին իրարանցումով ցած իջաւ տեղից և օգնեց երիտասարդ պարոնին կառքից դուրս գալու:

Գալաթին զանդահարեց, դուրս եկաւ մի աղախին. նա հարցըեց՝

— Կարելի՞ է տեսնել պրօֆէսորին:

— Նաշում է... կը հարցնեմ, ասաց աղախինը:

— Հարցըէք և տուէք ալս այցետոմսը:

Աղախինը գնաց և երկու բոսէից յետոյ վերադառնալով ասաց՝

— Պրօֆէսորը խնդրում է ձեզ սպասել իւր առանձնասենեակում:

Գալաթին ներս գնաց, հանեց վերարկուն և աղախինի յետևից մտաւ պրօֆէսորի առանձնասենեակը:

Մարչէնկօլի բնակարանի մի քանի սենեակների մի. ջից անցնելով, Գալաթին համոզուեց, որ հին պրօֆէսորն այնքան էլ երեսէլի չի ապրում. տան բոլոր կարգն ու սարգը հին ձևի ու մաշուած էր: — «Անշուշտ ալս ամենը պրօֆէսորի կինը օժիտ է բերել» մտածում էր նա հեգնելով — «և այն ժամանակուանից ալդպէս էլ, առանց փոփոխութեան մնացել է»:

Բաւական փոքր առանձնասենեակի բոլոր սլատերին էալին գրքի պահարաններ. մեծ գրասեղանի երեսը լիքն էր գրքերով ու թղթերով և առ հասարակ ամեն բան վկայում էր, որ այդ սենեակում ապրող մարդը գըրասէր էր:

Գալաթին արդէն 20 ըոպէի չափ սպասում էր և այդ նորան սկսեց գրգոել. նա սովոր չէր, որ իրան ըսպասեցնեն և բացի ալդ, նորա մէջ զաղթեց մի վատ ըզգացմունք՝ ընկնելով ալդ գիտնական սենեակում, նա արդէն էլ այն գտահանութիւնը չունէր, ինչ որ ունէր տանից դուրս գալիս և երբ մտածում էր, թէ ինչպէս պէտք է խօսի փողի մասին, դորա համար պատրաստի

խօսքեր չեր գտնում։ Իրանց տանը շրջապատուած շքեղ սարք ու կարգով, նա իրան զգում էր զօրեղ. այնտեղ ամեն մի առարկան կարծես խօսում էր իւր իշխանութեան մասին. իսկ այստեղ ընկնելով մի օտար, բոլորովին անծանօթ ու թշնամի շրջանի մէջ, նա իրան անպաշտպան էր համարում։ Այդ քսան բոպէն նորա կեանքի ամենավատ ու անդուր բոպէներն էին։

Լսուեց ոտքի ձախն և Մարչէնկօն ներս մտաւ. նա արդէն ժամանակ էր գտել շորերը փոխելու՝ հագել էր լայն բաճկոն, իսկ շապիքի փափուկ, չօսլալած օձիքից կապել էր մի հնագարեան փողկապ։

— Օ՛հ, ասաց Մարչէնկօն ներս մտնելով. եկել է պ. Գալաթիին։ Այո՛, այո՛, սեղանատնից ես տեսալ ձեր ձիերը. երեսելի՛ ձիեր ունիք, պ. Գալաթի. մեր համալսարանը երբէք չէ տեսել... և ինձ թւում է, որ ամեն անգամ, երբ գուք ձեր շքեղ կառքով մօտենում էք համալսարանին, նորա համեստ պատերն ալլայլում են։

Այդ խօսքերի ժամանակ նորա շրթունքների վերայ նուրբ ծազր էր նշմարում։ Բայց ամենից շատ զարմացրեց Գալաթիին այն, որ պրօֆէսսօրը նրան ձեռք չըտուեց, այլ ուղղակի նշանով ցոյց տուեց աթոռը և աւելացրեց։

— Նստեցէք։

Դորանից լետոյ ինքն էլ նստաւ։

— Ինչո՞ւ համար էք ինձ մօտ եկել։

— Եկել եմ գործով, պրօֆէսսօր... Գուշակո՞ւմ էք թէ ինչ գործի համար է։

— Ի՞նչ հարկաւոր է ինձ գուշակել. երբ կարող էք ուղղակի բացատրել... երևի թուանշանի համար է. ալ, տեսնո՞ւմ էք, որպէս զի միանգամայն սիրալիր լինեմ, ես գուշակեցի։ Այդ միջոցին նա պատուհանից նալեց գէպի փողոցը և ասաց՝

— Յիրաւի, որչափ գեղեցիկ է ձեր կառքը և ծառան ինչպէս զարդարուած է... Հաւանական է, որ ալդ ամենը ձեր հպարտութեանը գոհացնում է, այնպէս չէ, պ. Գալաթի:

Գալաթին առաջուանից աւելի էր շփոթւում. նա չգիտէր թէ Մարչէնկօն ծիծաղում է իւր վերալ, թէ հէնց հանաք է անում. նա հասկանալ չէր կարողանում: Իսկ Մարչէնկօն շարունակում էր՝

— Ասացէք ինդրեմ, կարծեմ ձեր հալը մեծ կարողութիւն ունի, մօտաւորապէս...

— Մօտ եօթ միլիոն, պ. պրօֆէսսօր, պատասխանեց Գալաթին:

— Ա՛յ, թէ ինչպէս. այժ, ալդքան կարողութեան տէր մարդը, կարող է գլուխը բարձր բռնել... Դէհ, անցնենք գործին... ինձ համար կաշտոք էք բերել, այնպէս չէ...»

Ալդ հարցն այնպէս լանկարծ ու անսպասելի եղաւ, որ Գալաթին մինչև անգամ աթոռից վեր թռաւ և երեխալի պէս սկսեց թոթովել՝

— Ի՞նչ էք ասում, պ. պրօֆէսսօր, ես ինչպէս կը համարձակուէի...

— Ե՛, ինչքան էիք ուզում ինձ առաջարկել. Հը՛, հազմը, հինգ հազմը, լիսուն հազմը. ոչ քիչ է, քիչ... գիտէք, ես մինչև անգամ մտածում եմ, որ միլիոնն էլ քիչ է. ձեր հալը եօթ միլիոն ունի. դորա կէսը գուցէ թէ բաւական լինի. հապա ուրիշ տեսակ ինչպէս... Սպասեցէք, դուք կարծում էիք թէ իմ կարծիքը կարելի է լիսուն հազարի գնել... էժան է, էժան, երիտասարդ պարոն, չափազանց էժան է... Նատ հաւանական է, որ պատահել է ձեզ ուրիշի կարծիքներն աւելի էժան առնել, ոհի, շատ աւելի էժան, ես ալդ գիտեմ, բայց իմը թանգ արժէ, պ. Գալաթի...

Բայց Գալաթին այնուամենալնիւ դեռ չէր կարող հասկանալ, թէ պրօֆէսսօրն ալդ ամենն ինչ մտքով է ասում և նա բաւական անորոշ կերպով խօսեց՝

— Բայց, պրօֆէսսօր, ինչպէս ես կարող էի մտածել .. ինչպէս գուք կարող էիք ենթադրել...

— Ի՞նչպէս, միթէ ճշմարիտ չէ... ուրեմն ինչու գուք իմ տունս էք եկել. թէ որ դուք ուզում էիք ինձ մի որ և է ազնիւ բան ասել, կարող էիք ալդ անել համալսարանում, բոլորի ներկայութեամբ։ Մենք ձեզ հետ ծանօթ չենք, պ. Գալաթի, ես պատիւ չեմ ունեցել ծանօթանալու ոչ ձեզ և ոչ էլ ձեր հօր հետ. ուրեմն ինչու գուք ինձ պատիւ արիք և այցելեցիք. ի նկատի ունենալով ձեր հպարտութիւնն ու ինքնասիրութիւնը, ի հարկէ, ալդ չափազանց մեծ պատիւ է... Դուք ասում էք, չէք համարձակուել, պ. Գալաթի, եթէ ոչ, շատ վատ կը լինէր, շատ վատ...

Երիտասարդը բոլորովին ընկճուած էր ալդ ճառերի տակ և քիչ էր մնում, որ լալի նա արդէն շատ էր ափսոսում, որ վճռեց գալ Մարզէնկօլի մօտ և եթէ հնար լինէր, ուրախութեամբ գդակը կառնէր և գուրս կը վազէր սենեակից։

Եւ նա արտասանեց գողդոջուն ձայնով, համարեալ լաց լինելով։

— Պ. Պրօֆէսսօր, ինչու, արդեօք ինչու համար էք ինձ հալածում. .

— Ես ձեզ հալածում եմ, ամենսկ՞ն. ես դնում եմ ձեզ վատ թուանշան վատ պատասխանի համար, ուրիշ ոչինչ և ալդ ոչ միայն իմ իրաւունքն է, այլ և պարտականութիւնն է։ Միթէ վերաքննութեան ժամանակ ես ձեզ 4 չնշանակեցի, երբ որ դուք առարկան լաւ գիտէիք. եթէ ես ձեզ լիրաւի հալածող լինէի, ալն ժա.

մանակ ինչն էր ինձ խանգարում անարդար լինել և
4-ի փոխարէն 2 դնել:

—Բայց դուք այնպիսի խտրութիւն էք անում իմ և
ուրիշների մէջ... ալդ բոլորի, միանգամայն բոլորի աչ-
քին ընկնում է:

—Ո՞հ, ալո՞ խտրութիւն... ճշմարիտ է, ես ալդ
չեմ ծածկում: Ես լիրաւի, խտիր եմ դնում, բայց թէ
կալ զանազանութիւն և ձեր վիճակների մէջ: —Նոքա
բոլորը աղքատ են, նոքա իրանց ժամանակի երեք քա-
ռորդ մասը պիտի գործ դնեն ապրուստ, հաց ճարելու
վերալ: Նատերը գուցէ հազիւ հազ մի քառորդ ժամ են
խլում, որ տետրակի, կամ գրքի մէջ նալեն: Կարելի է,
նոքա փափագում են կարգալ, բան սովորել, բայց ժա-
մանակ չեն գտնում, կամ թէ յոգնում են աշխատելուց,
չարչարուելուց: Դուցէ լսարանը նոցա քաշում է դէպի
իրան, բայց նոքա ստիպուած են քաղաքի մէկ ծալրից
միւս ծալրը գնալ, որպէս զի դաս տան, տասն երկու
ոուբլով: Իսկ դուք, դմւք բաղդաւոր մարդ էք, դուք
ամեն բան ունիք, ձեզ հարկաւոր չէ վազվել հաց ճա-
րելու համար: Դուք կարսդ էք փառաւոր կերպով ձեզ
շըջասլատել սիրուն կազմած գրքերով և փափուկ բագ-
մոցին պառկած ձեռք բերել գիտութիւն, իմաստու-
թիւն... գիտէք ինչ նշանակութիւն ունի ձեր ընկեր
ների համար 2-ը. նոցա համար 2-ը կարելի է աշխա-
տանքի և զրկողութիւնների մի ամբողջ աւելորդ տարի
է, իսկ ձեզ համար... Զէ որ դուք 2-ով, թէ առանց 2 ի
կըվայելէք կետնքի բոլոր բարիքները... մի տարի վաղ,
թէ մի տարի ուշ աւարտելը, ալսինքն վկայական ստա-
նալը, որ ձեզ հարկաւոր չէ — միթէ մինչնոյնը չէ ձեզ
համար: Ո՞չ, եթէ ես անարդար եմ եղել, դէպի նոցա
եմ եղել, ոչ թէ դէպի ձեզ, որովհետև նոցա վատ պա-
պասխանին ես դրել եմ լաւ թուանշան: Բայց ինչպէս

ձեզ մէկ անգամ ասացի – ալդ անարդարութիւնն առնում եմ իմ խղճի վերալ բայց ես չեմ ուզում անարդար լինել դէպի ձեզ... անարդարութիւնը ձեր վերաբերութեամբ չեմ ուզում, որ ծանրանալ իմ խղճի վերալ դորա համար ես ոչ մի առիթ չունիմ...

— Բայց, պրօֆէսոր, համաձայնեցէք, որ բացի ալդ ամենից դուք դէպի ինձ անաշառ չէք...

— Օ՛, լիրաւի չեմ, ես խոստովանում եմ, որ մի տեսակ թշնամական զգացմունք ունիմ դէպի ձեզ, ուղիղն եմ ասում ձեզ:

— Թշնամական, — կրկնեց Գալաթին:

— Ալո՞, ալո՞ թշնամական. ինչու էք զարմանում. միթէ ես չեմ կարող ազատ կերպով դէպի մէկը համակրութիւն, կամ հակակրութիւն զգալ: Երևակալեցէք, ձեր ընկերներն աղքատ են, նոքա ման են գալիս մաշուած շորերով, պատուած կօշիկներով. շատ կարելի է օրերով քաղցած են լինում, իսկ դուք երևում էք նոցա շրջանում ձեր փառաւոր ձիերով, ձեր շքեղ կառքով, պճնուած ու կուշտ. կուշտ լինելն ուղղակի կարծես գրօշմուած է ձեզ վերալ... Ի՞նչ էք անում, դուք գիտէք. դուք նոցա աղքատութիւնն աւելի էք երևցնում: Երբ դուք մտնում էք նոցա ընկերութեան մէջ, նոքա աւելի աղքատ, նոցա զգեստներն աւելի ողորմելի են երևում, իսկ քաղցածութիւնն աւելի զգալի է դառնում: Դուք կարող էիք նոցա մէջ նախանձ զարթեցնել, եթէ նոքա չլինէին այնքան ջահէլ, այնքան միամիտ և այնքան մաքուր ու ճշմարտասէր: Եթէ որ նոքա չունենալին երիտասարդութեան դեռ հաւատարիմ, աղնիւ ընազդումը, դուք կարող էիք նոցա մէջ լառաջ բերել ամենավատ զգացմունքներ: Ալո՞ ալն, ինչ որ դուք էք անում, անքաղաքավարութիւն է, անվալել է և մեծահոգութիւն չէ վերջապէս...

— Բայց ես ինչ մեղաւոր եմ, պլոֆէսոնօր, որ իմ հայրը հարուստ է և ունի աշխարհիս բոլոր բարիքները, որոնցով ես օգտում եմ. միթէ կարող եմ կամաւոր կերպով հրաժարուել այդ ամենից...

— Ի՞նչու, հրաժարուել պէտք չէ. ձեզ տրուած են այդ առաւելութիւնները. չքննենք, դա արդարութիւն է, թէ ոչ. նոքա վերջապէս ձեզ տրուած են, օգտուեցէք նոցանով. բայց մի և նոյն ժամանակ չը պէտք է ուրիշներին վիրաւորել ձեր ունեցած առաւելութիւններով: Դուք ձեր փառահեղ տեսքով վիրաւորում էք այդ ընդհանուր աղքատութիւնը. դուք ձեր քիթը վեր բարձրացրած ներս էք ընկնում այդ շրջանի մէջ, ալդ ներդաշնակ, մտերիմ ընտանիքի մէջ և չէք էլ կարող միանալ, համակերպուել նոցա հետ, որովհետև շատ էք երևցնում այն, ինչով որ զանազանում էք նոցանից: Բայց ինչու էք ձեր գլուխն այդքան բարձր պահում. միթէ դուք նոցանից աւելի լաւ, աւելի արժանաւոր, աւելի ազնիւ, աւելի խելօք և աւելի զարգացած էք: Ամենելին. դուք միայն երջանիկ էք նոցանից, բարելաջող դէպքը ձեզ գցել է ամենալաւ դրութեան մէջ — ահա այս է բոլորը: Ձեր հարստութիւնը ձեզ լինի, միայն թէ ձեր ընկերների շըրջանում միք երևցնի: Երբ ձեզ առաջին անգամ տեսալ սեփական կառքով, զուգուած ու զարդարուած ծառալով, որ մօտենում էք համալսարանի դրանը, այն ըոպէից ձեզ ատեցի, ես ձեզ պարզն եմ ասում: Եւ ճշշմարիտ է, որ գէալի ձեզ անտչառ չեմ եղել. ես ամբողջովին ձեր գէմ եմ. ալօ, ամբողջովին, իմ բոլոր գոյութեամբս: Համալսարանը մի ընկերութիւն, մի բարեկամութիւն է. ամեն մէկ համալսարան մտնող պէտք է ամենից առաջ գիտենալ ընկեր լինել, միանալ, մերուել ընկերների հետ. թէ որ նա այդ չի կարող, թէ

որ նա իրան ինչինչ պատճառներով ուրիշ բան և ուրիշ խմորից շաղախում է կարծում, այն ժամանակ նա չսիտի ոտ կոխէ համալսարան։ Ձեզ համար պատիւ է, որ դուք գտնւում էք ալդ ըրջանում։ ձեր ընկերներն են ձեզ պատիւ անում և ոչ թէ դուք նոցաւ Եւ ուրեմն, եթէ որ դուք կարող էք ընկեր դառնալ, մնացէք. միայն այն ժամանակ թող սատանան տանի ձեր կասկածելի փառքի բոլոր արտաքին նշանները՝ կառքերը, ձիերը, ծառաները, վերջին տարագով հագուստները։ Ալդ բոլորը մեզ վաստակաւորներիս վիրաւորում է. մենք տասնեակ տարիներ աշխատում, չարչարւում ենք անդադար, կոտնում ենք գիտութեան ծանրութեան տակ, բայց այնուամենալինիւ չենք ունեցել ոչ կառքեր, ոչ ձիեր և ոչ զուգուած ու պենուած ծառաներ։ Մեզ համար ալդ ամենը փառքի նշաններ չեն. մենք հըպարտանում ենք բոլորովին ուրիշ բաներով և բոլորովին ուրիշ բաներ ենք լարգում։ Իսկ եթէ ընկեր լինել չէք կարող, հեռացէք։ Ահա, այն ամենն ինչ որ ուզում էի ձեզ ասել, իսկ ձեր լիմար դատողութիւնը կաշառքի մասին... ներում եմ. ես լաւ եմ հասկանում, որ ալդ միտքն առաջ է եկել ձեր առևտրական հայեցքներից. մի և նոյն է, ոչինչ չաւելացըեց իմ ունեցածս դդացմունքին դէպի ձեզ։

Գալաթին լուռ նստած, ցած էր նալում։ Պրօֆեսորի ամեն մէկ նոր խօսքից լետոյ, նա զգում էր, որ նորա ասածները ճշմարիտ են. ալդ խօսքերը նորա հոգու խորքում արձագանք գտան. միայն թէ, գուցէ անլարմար էր ալդ խոստովանել. Բայց լանկարծ, նա վերելաւ իւր տեղից, շտկուեց և շտապով իւր ձեռքը մեկնեց։

— Ենորհակալ եմ ձեզանից, թանկագին պրօֆեսոր, շնորհակալ եմ... չգիտեմ թէ ինչպէս շնորհակալ

լինեմ։ Եթէ գիտենաք, թէ որչափ բարիք արիք դուք ինձ ձեր խօսքերով... Եւ ներեցէք խնդրեմ իմ լիմար մտքի համար... այս, ալո՞ չափազանց շնորհակալ եմ, որ ներեցիք ինձ... ես ալդ ներողամտութեանն արժանի չէի։

— Ո՞հ, լաւ է... շնորհաւորում եմ։ Շատ լաւ, շատ լաւ, ուրեմն ես բոլորովին կըհաշտուեմ ձեզ հետ, քանի որ դուք զգացիք ձեր մեղքը, ես կըհաշտուեմ... ալ, հիանալի՛ բան եղաւ։

Եւ Մարշէնկօն լուզուած երկարացրեց իւր երկու ձեռքը դէպի Գալաթին և սեղմեց նորա ձեռքը։

Գալաթին շուտով դուրս եկաւ նորա տանից։ Ծառան իւր սովորութեան համեմատ դրսի դուռը բացեց նորա առաջ և հէնց որ ուզում էր օգնել, որ նա կառքը նստի, Գալաթին բնազդմամբ լետ մղեց նորան։ լանկարծ նա կարծես անլարմար զգաց օգտուել ծառալի ծառալութիւնից։

Եւ մի տեսակ զզուելի զգացմունքով նա կառքը նստաւ։ Նորան թւում էր, որ ալդ աւելորդ է։ Բնչքան աւելի լաւ կըլինէր մի քանի հարիւր քայլ ոտով գնալ։ չէ որ շատ մօտ էր ապրում։ Նա տուն վերադարձաւ չափազանց լուզուած և երբ հալրը նորան ուրախուրախ հանդիպեց ու հարցրեց՝

— Է՞, բնչպէս եղաւ, գործդ սարքեցի՞ր պրօֆէսորի հետ։

Նա ոչ մի խօսք չպատասխանեց և մոալլ դէմքով ներս մտաւ իւր սենեակը։

Ալդ ժամանակուանից Գալաթին բոլորովին փոխուեց—նա լանկարծ թողեց իւր առաջուալ սովորութիւնները։ Համալսարան էլ չէր գալիս իւր կառքով և միշտ հագնւում էր շատ պարզ։ Ինքն էլ բոլորովին այն չէր—նա լուրջ դառաւ, անկեղծ սրտով աշխատում էր լուսութ։

մօտենալ ընկերներին և մտերմանալ նոցա հետ։ Նա նոցա մէջ բաւական ընկերներ ճարեց և շատ շուտով բոլորովին թողեց առաջուայ ծանօթների շրջանը, նորան դատարկ և անհետաքըքիր համարելով։

Կար ժամանակ, որ Գալաթիին ամենքն ալնպէս լարգում ու սիրում էին, որ նորա տունն իւր ընկերների համար ամենասիրելի տեղը զառաւ։

Իսկ Մարչէնկօն միանգամ ընդ միշտ հաշտուեց նորա հետ և մինչև անգամ հպարտանում էր իւր աշակերտ Գալաթիով, որ նորա առարկալին առանձին առաւելութիւն էր տալիս։

Թարգմ. Ճիրոիչի ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

